Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյանը**

**ք. Հրազդան** **26.09.2011թ. ժամը 11.⁰⁰**

*ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝*

-Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներից 58 - ը /բացակայում էին Արովյան, Ծաղկաձոր, Արտավազ, Ֆանտան, Արզնի,Գեղաշեն, Ջրվեժ, Նոր Գեղի, Պռոշյան համայնքների ղեկավարները/
-Վ.Բակլաչյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

*ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԷՐ՝*

-Տ.Խաչիկյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ

*Օ Ր Ա Կ Ա Ր Գ*

**1.Մարզում առկա բնապահպանական հիմնախնդիրների և առաջիկա անելիքների մասին:**
*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/*

**2.Համայնքների բյուջեների սեփական եկամուտների 9 ամսվա հավաքագրման արդյունքների մասին:**
*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Լ.Նահապետյան/*

**3. Այլ հարցեր:**
**3.1.«Լավագույն համայնք-2011», «Մաքուր համայք-2011», «Տարվա մշակութային համայնք», «Լավագույն համայնքային կայք-2011», «Լավագույն կանաչապատված համայնք-2011» մրցանակաբաշխությունների մասին:**

**3.2.ՀՀ վարչապետի 2011թ. սեպտեմբերի 14-ի N862-Ա որոշման մասին:**

**3.3.Ս/թ նոյեմբերի 24-ին Լոս Անջելեսում հերթական «Հեռուստամարաթոն-2011»-ի անցկացման մասին:**
*/ զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ս.Հակոբյան/*

**3.4.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թ. սեպտեմբերի 13-ի N 69-Ա/1 «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մասին»:**
*/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի երեխաների, կանանց և ընտանիքների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա.Պետրոսյան/*

*ԼՍԵՑԻՆ՝*

1.Մարզում առկա բնապահպանական հիմնախնդիրների և առաջիկա անելիքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

*ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ՝*

***ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանին՝***

1.1.Ներկայացնել առաջարկություն «Աղվերան Հոթել» և «Գանձաղբյուր» հանգստյան տների համատեղ մաքրման կայանի վերագործարկման վերաբերյալ:

1.2.Պատրաստել գրություն ՀՀ բնապահպանության նախարարին ասֆալտի գործարանների կողմից արտանետումների թույլատրելի սահմանային չափերը ճշտելու համար:

*ԱՌԱՋԱՐԿՎԵՑ՝*

***Արամուս, Լեռնանիստ, Գառնի համայնքների ղեկավարներին՝***

Մինչև ս/թ հոկտեմբերի վերջը կազմակերպել հողերի կատեգորիաների փոփոխման և վարձակալությունների կնքման գործընթացը:

*ԼՍԵՑԻՆ՝*

2.Համայնքների բյուջեների սեփական եկամուտների 9 ամսվա հավաքագրման արդյունքների մասին:

Զեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

*ԼՍԵՑԻՆ՝*

3. Այլ հարցեր:

3.1.«Լավագույն համայնք-2011», «Մաքուր համայք-2011», «Տարվա մշակութային համայնք», «Լավագույն համայնքային կայք-2011», «Լավագույն կանաչապատված համայնք-2011» մրցանակաբաշխությունների մասին:

3.2.ՀՀ վարչապետի 2011թ. սեպտեմբերի 14-ի N862-Ա որոշման մասին:

3.3.Ս/թ նոյեմբերի 24-ին Լոս Անջելեսում հեռթական «Հեռուստամարաթոն-2011»-ի անցկացման մասին:

3.4.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թ. սեպտեմբերի 13-ի N 69-Ա/1 «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մասին»:

Հայտարարություններն ընդունվեցին ի գիտություն:

*ԱՌԱՋԱՐԿՎԵՑ՝*

*Համայնքների ղեկավարներին՝*

Ակտիվ մասնակցություն ցուցաբերել «Լավագույն համայնք-2011» «Մաքուր համայք-2011», «Տարվա մշակութային համայնք», «Լավագույն համայնքային կայք-2011», «Լավագույն կանաչապատված համայնք-2011» մրցանակաբաշխություններին և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ս/թ նոյեմբերի 24-ին Լոս Անջելեսում անցկացվելիք հերթական «Հեռուստամարաթոն-2011»-ին:

/ Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ